

վայելել, և ես աեր թաղով ըստ օրինաց ինձի ինկած հարսութեան, պիտի կարենամ վրէժս առած լինել բու անզգամ և անգութ գործողութենէդ:

Այս խօսքերս ըսելով Պերբայի ձեռքէն բռնած՝ արագութեամբ սանգուղէն վարի իջաւ, վերին ատելութեան և արհամարհանաց հայեցուածք մ'արձակելով ձեւ Թրուափ վրայ, որ այնպիսի բռնաւ ցաւոց իրաւացի կշտամբանաց փոխադարձ սկսաւ սերանաբաց անհեթեթ ծիծաղիլ:

Տղան՝ արժանաւոր որդիի այնպիսի մօր մը, հազիւ թէ երկու աշխականներն մեկնեցան, սկսաւ ցատկել ցատկըստել սենեկին մէջ, ըսելով.

— Մայրիկ, հիմա որ իրենց պատըստած հնոաիներով դնացին կորուեցան, մնաք աշտան երթանք, քարոզ լմացաւ:

Շարունակելի

ՀԱՅԻԿ

## ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

### ԱՃՈՒՄՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ԵԽՐՈԳԻՈՅ

Արգի ժամանակաց ծանր և երկարատև հասարակաց յուզմանց մէջ, մարդիկ թողով զներկայն և զանցեալն՝ ապագային վրայ աւելի իրենց մոտադրութիւնը կ'ուղղեն, մանաւանդ թէ կը ջանան նոցամիջոցով գուշակել զապագայն:

Այս է ահա մատենագրաց և վիճակագրաց շատերուն փոյթն, որոց աչաց առջև միշտ ներկայ է Եւրոպիս մերձակայ ապագայն, որով կը սրեն իրենց միտքը նորանոր գուշակութեամբք գլխաւոր ազգաց և բովանդակ իսկ քաղաքականացեալ աշխարհիս ապագային վրայ:

Ընդհանրապէս իրենց խուզարկութիւնքն երեք կէտի մէջ կը բովանդակուին. այն է, նկատմամբ ժողովրդեան, տնտեսազիտութեան և քաղաքականութեան. և 'ի սոյնս այժմեան դէպքերը հիմն զնելով գուշակութեանց անծայր ասպարիզին մէջ յառաջ կը նետուին: Բայց իրենց սխալն յոյնմէ, որ բարոյական աշխարհս ալ ըստ աստեղաց աշխարհի՝ անփոփոխ օրինագ վարեալ կը համարին, մինչդեռ մարգկային ազատութիւնն և աստուածային ամենակարող նախախնամութիւնն մեծ մասն կը գրաւեն 'ի միասին, ըստ առածին թէ՝ Մարդկ առաջադրէ, այլ Աստուած տնօրինէ:

Առնունք 'ի ձեռս օրինակ իմն զագգահամարն և հարցնենք, ինչ պիտի ինի աշխարհս կամ գէթ Եւրոպա յետ յիսուն, հարիւր կամ աւելի ամաց, երբ իւր ներկայ ժողովուրդն կրկնապատիկ կամ եռապատիկ լինի:

Սոյզգ է որ ամէն աեղ արդ աճումն յայտնի է, ոչ ոք կրնայ երկբայիլ: Ըստ բաշակշիռ հաշուոց լավասէօրի, աշխարհիս արդի բնակ-

շացթիւն է գրեթէ հազար չորս հարիւր ութսուն և երեք միլիոն, վասն զի ստոյդ հաշիւը գտննել չէ հնար Ասիոյ, Ափրիկէի և մասամբ Ամերիկայի: Բայց քաղաքականացեալ տէրութեանց մէջ 1840 էն ՚ի վեր եղած աճման վրայ տուեալ հաշիւն ամեննեին երկրայութեան տեղի չի տար:

Իստակիոյ մէջ (յամա 1872 — 1885) ծնելոց միջին առաւելութիւնն քան զմեռեալսն է իր 0,68 առ հարիւր, որ և մինչև 1 առ հարիւր կը հասնի. հետևաբար հանդերձ ժանտամահիւք և բազմաթիւ գաղթականութեամբ, այս միջացիս մէջ իւր բնակիչքը 2,700,000 աւելցերեն: Եւ մինչ 1872 թուականին 26,994,338 բնակիչ ունէր, 1887ին 29,943,607 բարձրացեր էր, և հաւանական է որ արդ Յո միլիոնէ աւելի լինին:

Իսկ Գերմանական կայսերութեան մէջ, աճումն հասեր է գրեթէ 4,26 և 1,15 առ հարիւր, վասնզի ՚ի սկզբան բազմաթիւ գաղթականութիւններ ունեցաւ: Իսկ 1875 — 1885 յաւելեալ է ժողովուրդն 4,100,132. այնպէս որ, մինչ 1865 ին 42,752,554 բնակիչ ունէր, 1885 ին կը հաշուէր 46,852,686. և արդ գրեթէ 49 միլիոն պէտք է լինի:

Նոյնպիսի վիճակի մէջ կը գտնուի նաև Աւստրիա-Հունգարիոյ ազգահամարն, անդ ես աճումն է 1 առ հարիւր, 16 տարուան միջոց, ՚ի բաց առեալ իւր նոր երկիրներն, այն է Գոսնիա և Էրցէկովինա, յամա 1870 — 1886 ժողովուրդն 4 միլիոն աւելցեր է: և արդ կայսերութիւնն, որ 1870 ին 36 միլիոն բնակիչ ունէր, մերձաւորապէս կը բովանդակէ լի 4 միլիոն:

Աւելի արագ աճումն ունեցած է Մեծն Բրիտանիա, որոյ բնակչացթիւն, որ կարծես բազմաթիւ գաղթականութեամբ փութով պիտի նուազէր, 80 տարուան մէջ, այն է 1801 — 1881, եռապատկեալ է և ամը ըստ ամէ կ'աճի 1,30 և 1,40 առ հարիւր. 1885 ին 5 միլիոն աւելի բնակիչ ունէր քան զ 1871 թուականն, և արդ 38 միլիոնէ նուազ չէ:

Նոյնպէս Սկանծինաւեան տէրութիւնք Շուէտի, Նորուեկիոյ և Տանիմարբայի, ազգահամարին մէջ կը ցուցընեն 1,10 և 1,40 առ հարիւր տարեկան աճումն, թէպէտ իրենք ևս եւրոպական այլ տէրութեանց նման բազմագունդ գաղթականներ կը զրկեն օտար աշխարհ:

Դժուարագոյն է Խուսիոյ ընդարձակածաւեալ տէրութեան ժողովը քը աճումն ստուգել, որոյ բնակիչք են Եւրոպիոյ և Ասիոյ մէջ՝ ի միասին 105 միլիոն, Վերջին ազգահամարը տասն ամաց մէջ, այն է 1874 — 1884, բովանդակ կայսերութեան մէջ 17 միլիոն բնակչաց առաւելութիւն կը ցուցընեն, որ կը համապատասխանէ 1,63 առ հարիւր՝ տարեկան աճումն: թէպէտ ըստ գաւառաց՝ աճումն կը տարբերի, և բարձրագոյն կէտի կը համնի Բոլոնիոյ մէջ, ուր միշտ քան զ 1 առ հարիւր բարձր է:

Քան զամէն վերոյիշեալ տէրութիւնները, և նոյն իսկ քան դՊելճիա, Զվիցցերի, Սպանիա, յոյժ ստորին է Գաղղիա. որ թէպէտ ամենաոչինչ գաղթական կը դրկէ արտաքս, սակայն նուազ է աճումն, և համեմատութեամբ ուրիշ տէրութեանց կրնանք ըսելթէ կը նուազի դրեթէ ըստ Հավասէօրի հաշուին, որ 1804—1836 ամաց մէջ 11 միլիոն բնակիչ յաւելեալ կը գտնէ. որ թէպէտ Ալզաս և Լորէն գաւառներն կորոյս, սակայն փոխանակ նոցա ստացաւ նիցցա և Սավոյիա: Թիրաւի միջին հաշուով աճումն որ 1872 ին էր 0, 47 առ հարիւր, 1886 ին իջաւ 'ի 0, 14. իւր ժողովուրդը 1872 յամն 1885 աճեցաւ 2,060,000 աւելի. մինչդեռ իտալիա՝ որոյ ժողովուրդն նուազ է և բազմաթիւ գաղթականներ ունեցաւ յօտար երկիրս, աճեցաւ զրեթէ 2,700,000. ուստի յայտնի կը տեսնուի թէ 'ի տնտեսական՝ մանաւանդ՝ 'ի բարոյական կարգի՝ այս ազգս կենսական թշուառութեան մէջ է, որոյ վրայ ընդարձակօրէն խօսած են և կը խօսին տնտեսագէոր, փիլիսոփայք և աստուածաբաննք: Երանիք թէ ճանչնային ինչ է 1789 ին քաղաքականութիւնն և ուր հասոյց զիրենք:

Ընդհանուր օրինագր ազգահամալր կամմիհակագիրք կը համարին թէ 70 տարուան մէջ ժողովրդեան թիւն կը կրկնապատկի՛ և առ հարիւր աճումն ենթագրելով:

Վերջին 85 ամաց մէջ 1800—1886 հազիւ կրկնապատկեցաւ, վասընզի մինչ 1800 ին 175 միլիոն բնակիչ ունէր Եւրոպա, 1886 ին 347 միլիոնի բարձրացեր էր. սակայն հարկ է միանգամայն ըսելթէ 20 միլիոն գաղթական ունեցաւ այս միջոցիս յօտար երկիրս:

Ուրդ եթէ այս աճումն ժողովրդեան ընդունինք շարունակաբար, պէտք է ըսենք որ յետ մի դարու թուսից կայսրութիւնն զրեթէ 250 միլիոն բնակիչ պէտք է ունենայ, Գերմանականն 120, Աւստրիա—Հունգարական 100, Մեծն Բրիտանիա 85, Գաղղիա թերևս 80, իտալիա 70. և այսպէս համեմատաբար ուրիշ տէրութիւնք, Սպանիա, Բրուգուգալ, Զվիցցերի, Պելճիա, Հուանտա, Ծկանտինաւիա:

Ուրդ ոկարող է պատասխանել հարցմանս. ինչ պիտի լինի Եւրոպա այսպիսի աճման մէջ: Առ այս պատասխանելու համար, հարկ է ուրոշել կամ տնտեսական, կամ քաղաքական և կամ ընդհանուր ընկերական վիճակն, որք 'ի հարկէ կցորդեալ են բարոյականի և կրօնից հետ: Դարձեալ պէտք է աշաց առջև ունենալ կրկին գլխաւոր տէրութիւնքն, այն է Ռուսաստան և Ամերիկեան Դաշնակցութիւնն, որոց ձեռքն է դողցես առեղծուածիւն բանալին:

Վերջնոյց աճումն թէ 'ի բնէ ըստ մասին ծննդեան և թէ անընդհատ գաղթականաց բազմանալով անհաւատալի բան մի կ'երեի տասըն աճաց մէջ, այն է 1870—1880, բնակիչք 11, 519, 753 յաւելան, յորոց 2, 802, 690 գաղթականութեամբ (0, 78 առ հարիւր յամի), իսկ մասցեալն ծննդեամբ (2, 26 առ հարիւր յամի). այսու կը հա-

շուեն թէ ի վերջ դարուս 80 միլիոնի պիտի մերձենայ. վասն զի 1840 էն սկսելով վիճակագիր աղքահամարք կը գտնեն թէ 28 ամաց մէջ կը կրկնապատկին իւր բնակիչք, այնպէս որ 1910 ին հաւանական կ'երեի թէ 100 միլիոնն անցնի, թէ տեղույն ընդարձակութեան, պալարերութեան, և թէ եւրոպական գաղթականաց յաճախութեան պատճառաւ:

Ամենայն ոք յայտնի կը տեսնէ թէ այս ենթադրութիւնքս Եւրոպիոյ խաղաղութեան վրայ հիմնեալ են, որոյ տեսղութիւնն անսույց է, և աճման իսկ խափանարար պատճառք կան. որոց մի մասն եթէ յայտնի, այլքն անյայտ են, զորս և անհնարին է նախատեսել, թէ պէտ և մեծահանճար ոք լինի:

### Կարունակելի

## ՀՐԱԺԵՑ

Ուր սըրընթաց այսպէս արագ  
Ընկոհակաց հերձեալ կուտակ,  
Ըսդէր ՚ի վայրացս այսպէս սիրելեաց  
Թռանիս, ով նաև արագընթաց.  
Ուր քաղցր աւուրք մանկութեանս  
Որպէս զալիսըդ սահեցան:  
Թուզ ըշհուսկ զի՞ւտալ ողջոյն չըքնազագեղ Վենետիկին.  
Ով Վենետիկ, ով գու բամբիչն ալեաց Հանգըն.  
Որպէս երեսն ծովուց համայն.  
Կաց, Վենետիկ, թարեւու, քաղաք անըման,  
Այլ ոչ տեսից ուրեմն ըշքեղ ՚ի պահուն  
Յորում արե չոզողուն  
Զթիկամբ ըթքեղ քոց պաշտանց  
Ի վեր եւեալ բարձրանայր յերկնից խորանս գըմբեթարդ.  
Միւն կոնտայն թեթևընթաց  
Ի խաղաղ ջուրցըդ վերայ  
Ի խաղաղ լուսեկ հեղասահ,  
Ի արեածայրց կարմրավարդ  
Ըշքոշմալ ջուրց ծիծազալիօն ըսպիտակ  
Ի գոյն չողին կարմրորակ:  
  
Կամ թէ յարժամ արփեոյն նըսյլքըն պայծառ  
Անհետ եղեալ կորընչէին  
Գուշիոն բլուրց Ալպեան բարձանց վեհափառ,  
Եւ ամպ կուտակ կուտակ մըթին  
Ի հորիզոն մերժ ՚ի գեղին